«Դիլիջանի կենտրոնական դպրոց» կրթական հիմնադրամ
ք. Դիլիջան 3905, Մոլդովական 77
Հեռ.՝ + 374 10 592762, + 374 94 543707
Էլփոստ՝ welcome@dcs.am
Կայքէջ՝ www.dcs.am

Ընդունելության թեստ 9-րդ դասարանի համար
Հայոց լեզու

Անուն-ազգանուն_____ Ամսաթիվ _____

1. Լրացնել անհրաժեշտ տառերը: [20]

Ես թողնում եմ աս_ալտապատ ճանապարհը, բռնում մի նեղ ու փոշոտ ճա_փա, և հայա_քս խճճվում է սար ու քարի մեջ: Ամռան իրիկնամուտին երկինքը կարմիր փոշի է մաղել հանդիպակա_ լեռների խանձված կատարներին: Երկնամու_ լեռան գագաթից իջնում է քչքչան մի առու՝ ոլորուն ու աղմկոտ: Թվում է, թե առուն երկնքից է գալիս, և ճերմակաթույր ամպերի մեջ է նրա ակունքը: Թվում է՝ առուն ոչ թե վճի_ ու պաղպաջուն ջրով, այլ ամպաքուլաներով է լցված:

Գյուղի տների կտուրներն էլ ամպերի պես ճեփ-ճերմակ են: Նրանցից շատերի վրա օրոր-շորոր նազում են սաղար_ախիտ ու բարձրուղեշ ծառերի ճյուղերը:

Գյուղի դիմաց փռվել է զմրու_տաշող հար_ավայրը՝ խոր_ու բոր_ ճանապարհով երկատված: Այստեղ երկու կտոր կանաչ կա՝ այգին ու ծխախոտի արտը, իսկ մնացածը ցորենի հու_թի արտերն են, որոնց վրա ցոլցլում են հրաշեկ արևի ոսկեզ_ծ ճառագայ_ները:

Գյուղի ոլոր-մոլոր փողոցների հ_կված քարերին դանդաղ_ռեն փշրվում են ծանրացած ոտնաձայները: Դաշտից տուն դար_ող մարդկանց հետ մթնշաղը թանձրանում է, լցվում սար ու հանդերի բույրով:

Երեկոն իր հո_նած գլուխը դնում է գյուղի թիկունքի ա_ ու ձախ լեռների վրա ու համբանում, հետ_հետե ընկղմվում խոր նիրհի մեջ:

2. Տեքստից դուրս գրել 1 պարզ ընդարձակ նախադասություն և դարձնել պարզ համառոտ: [8]

_____

_____

_____

3. Տեքստից դուրս գրել 1 բաղադրյալ ստորոգյալ, նշել՝ ինչ խոսքի մասով է արտահայտված ստորոգելին: [4]

_____

_____

4. Տեքստից դուրս գրել 2 պարզ ստորոգյալ, յուրաքանչյուրի համար նշել ժամանակաձևը, դեմքը, թիվը: [8]

_____

_____

_____

5. Դուրս գրել տեքստի առաջին նախադասության ենթակաները, գրել, թե ինչ խոսքի մասով են արտահայտված: [4]

_____

_____

6. Գրել տեքստի վերջին նախադասության տեսակը՝ ըստ կազմության և ըստ հնչերանգի: [6]

_____

7. Տեքստի շուրջ կազմել հարցական հնչերանգ ունեցող 1 նախադասություն: [5]

_____

_____

8. Տրված պատմողական նախադասությունները դարձնել ժխտական: [6]

Նրա պատմածը անչափ հետաքրքիր էր:

Սրահում հավաքվածներից ամեն մեկը գիտեր իր հետագա անելիքը:

_____

_____

9. Տրված նախադասությունը դարձնել բացականչական՝ ավելացնելով անհրաժեշտ բառը կամ բառերը: [3]

Ադամանդներ էին ներկայացված ցուցահանդեսի ժամանակ:

_____

10. Շարունակել տրված կառուցները՝ ստանալով արգելական հրամայականի ժամանակաձևերով նախադասություններ: [4]

Ուրիշի ունեցվածքին աչք _____

Ընկերոջդ մասին _____

11. Գտնել այն նախադասությունները, որոնցում կա համաձայնության սխալ, ընդգծել սխալը և տողի վրա գրել ճիշտ տարբերակը: [12]

Ա. Ալպերը Եվրոպայի ամենաբարձր լեռնաշղթան են:_____

Բ. Արևի մայր մտնող շողերը հրդեհել էր լեռների կատարները, ներկել շառագույն:____

Գ. Աշխատակիցների մի մասը չէր ներկայացել ժողովին:_____

Դ. Զեզանից ամեն մեկդ իր խոսքը կունենա միջոցառման ժամանակ:_____

Ե. Առևտրային կազմակերպությանը անհրաժեշտ է վարորդներ:_____

Զ. Վանականների խումբը աննկատ հեռացան: _____

12. Տրված տեքստը վերաշարադրել՝ բոլոր պարզ համառոտ նախադասությունները դարձնելով պարզ ընդարձակ և պահպանելով շարադրանքի ամբողջականությունը: [20]

Առավոտ էր: Ես շտապում էի: Մոտեցան: Սկսեցին պատմել: Անշո՛ւշտ, հետաքրքիր էր: Բայց ես պիտի գնայի: Առաջարկեցի: Նրանք դեմ չեղան: Ես ժպտացի: Օ՜, թերևս ամեն ինչ առջևում է: